Հավելված
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2025 թվականի նոյեմբերի «25» N 08-L որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևան 2025

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

Գրասենյակ - Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների

ք. Երևան, Արարատյան 26
. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

		աշխատանքների համակարգման գրասենյակ
ԱԱՏՄ	-	Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ԻԱՓՎ	-	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ԻԽՀՏԱԲ	-	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
ԴՇՎՎ	-	Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն
ԲՕՍՎՎ	-	Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն
ՀՍՀՎՎ	-	Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն
ԱՕՎՎ		Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն
ՏԿ		Տարածքային կենտրոն

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործում է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և

աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 755-L որոշման համաձայն:

Տեսչական մարմնի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության և անձի ֆունկցիոնալության գնահատման բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, անձի ֆունկցիոնալության գնահատման, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, անձի ֆունկցիոնալության գնահատման, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում:

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում գործունեություն է ծավալում 165.903 տնտեսավարող սուբյեկտ: Տեսչական մարմինն ստեղծվել է 2017 թվականին, վերջնականապես ձևավորվել է, և իր գործունեությունը կանոնակարգող օրենսդրական հիմնական փաթեթը հաստատվել է 2018 թվականի կեսերին, իսկ ստուգումների գործընթացը մեկնարկել է միայն 2020 թվականի կեսերին:

Խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 27-ի N 12-Լ որոշմամբ հաստատվել է 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը, որով նախատեսվել էր իրականացնել 877 ստուգում (861 տնտեսավարող սուբյեկտների մոտ), որոնցից՝ 831 բարձր ռիսկայնությամբ, 4 միջին ռիսկայնությամբ և 42 ցածր ռիսկայնությամբ տնտեսավարող սուբյեկտների մոտ:

2025 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում հրապարակվել են տարեկան պլանավորված 861 տնտեսավարող սուբյեկտից 755 ստուգման հանձնարարագրերը: Միաժամանակ իրականացվել է 271 վերստուգում:

ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌ 31.10.2025Թ.



- Աշխատանքային իրավունք 191
- Աշխատանքի անվտանգություն 175
- Բժշկական օգնության և սպասարկման 47

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԵՐ՝ 755

ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌ 31.10.2025Թ.



- Աշխատանքային իրավունք 21
- Աշխատանքի անվտանգություն 41
- Բժշկական օգնության և սպասարկման 48
- Դեղերի շրջանառության 33
- Բնակչության սանիտարահամաճ.անվտանգութ. 128

ՎԵՐՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԵՐ՝ 271

ք. Երևան, Արարատյան 26
. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում ստուգումներին զուգահեռ իրականացվել են նաև վարչական վարույթներ: 2025 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում իրականացվել է 1939 վարչական վարույթ:



2025 թվականի 3 եռամսյակների կտրվածքով իրականացված ստուգումների արդյունքում լրացված ստուգաթերթերի միավորների վերլուծության արդյունքում պարզվել է, որ, ըստ վերահսկողության առանձին ոլորտների, տնտեսավարող սուբյեկտների կողմից օրենսդրության պահանջների պահպանման տեսանկյունից առկա իրավիճակը հետևյալն է (ստուգաթերթերի խախտված միավորներ՝ տոկոսային արտահայտմամբ).

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)

ք. Երևան, Արարատյան 26
. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

1	**Դեղերի շրջանառություն**	9.4
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	0.5
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	4.3
4	**Աշխատանքային իրավունք**	9.8
5	**Աշխ. անվտանգություն**	5.6

Տեսչական մարմնի կողմից իրականացած վերահսկողության արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ վերահսկողության բոլոր ոլորտներում առանձնանում են օրենսդրության մի շարք պահանջներ, որոնց խախտումներն առավել հաճախ են հանդիպում։ Այսպես.

Դեղերի շրջանառության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ ՀՀ-ում չգրանցված դեղեր ներմուծելը,
- ✓ դեղերն օրենքի խախտմամբ ներմուծելը,
- ✓ չգրանցված կամ օրենքի խախտմամբ ներմուծված դեղեր իրացնելը,
- ✓ դեղատոմսեր չգրելը և դեղատոմսով բաց թողնվող դեղերն առանց դեղատոմսի բաց թողնելը։

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ լիցենզիայի պայմանների և պահանջների խախտումները, այդ թվում՝ առանց համապատասխան կրթության բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցումը,
- ✓ բժշկական փաստաթղթերի թերի լրացումը,
- ✓ «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների խախտումները,
- ✓ առանց համապատասխան ՇՄԶ հավաստագրի աշխատանքի թույլատրելը։

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ոլորտում առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

✓ աղմուկի վերաբերյալ օրենսդրության պահաջների խախտումները,

✓ խմելու ջրամատակարարման համակարգին ներկայացվող պահանջների խախտումները,

✓ պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգի խախտումները։

Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

✓ աշխատողներին աշխատանքի կոլեկտիվ և անհատական պաշպանության միջոցների տրամադրման և կիրառման խախտումները,

✓ աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության անցկացման կարգը խախտելը,

✓ աշխատավարձ և վերջնահաշվարկ չվճարելը կամ ժամկետանց վճարելը,

✓ օրենքով սահմանված կարգով և ժամկետում աշխատանքային պայմանագրեր չկնքելը։

Վերահսկողական աշխատանքներին զուգահեռ՝ իրազեկման աշխատանքներ են իրականացվել Տեսչական մարմնի վերահսկողության ներքո գործող տնտեսավարող սուբյեկտների շրջանում։ Իրազեկման դասընթացների թեմաների շրջանակը կազմվել է՝ հաշվի առնելով տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ թույլ տրված խախտումները։ Միաժամանակ, իրականացվել են իրազեկումներ նոր ընդունված իրավական ակտերի և դրանցով սահմանված պահանջների վերաբերյալ։

Լրամշակվել են Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների մի շարք ստուգաթերթեր՝ համապատասխանեցնելով գործող նորմատիվ իրավական ակտերին։

Առաջարկություններ են ներկայացվել Գրասենյակին՝ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտները կանոնակարգող մի շարք

օրենքներում և նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նպատակով:

Միաժամանակ, առաջարկություններ են ներկայացվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված օրենսդրական փոփոխությունների և լրացումների մի շարք նախագծերի վերաբերյալ:

ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Տեսչական մարմնի կողմից իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես.

1. Հաշվի առնելով աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերում հաճախակի կատարվող փոփոխությունները, ինչպես նաև՝ այդ բնագավառում վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող աշխատողների հոսունության մակարդակը, արդիական է Տեսչական մարմնի աշխատողների վերապատրաստումները:

2. Աշխատանքային օրենսգրքի մի շարք հոդվածներով սահմանված պահանջների խախտումների համար կիրառվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված «նախազգուշացում» վարչական տույժը, սակայն «նախազգուշացում» վարչական տույժը ներգործության արդյունավետ միջոց չի կարող հանդիսանալ և հիմնականում չի կարող ապահովել այն պարտականության կատարումը, որը չկատարելու համար նախատեսվել էր «նախազգուշացումը», ինչպես նաև՝ անհրաժեշտ և համարժեք չէ աշխատանքային օրենսդրությամբ հետապնդվող նպատակին: Նախատեսվում է լրացում կատարել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում և աշխատաժամանակի հաշվառում չիրականացնելու, ինչպես նաև՝ սահմանված ժամկետում գործող աշխատանքային պայմանագրերը թվային համակարգ չմուտքագրելու համար նախատեսել տուգանք:

3. Դեղերի շրջանառության ոլորտում արձանագրվել են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բժիշկների կողմից դեղատոմսով բացթողնվող դեղերի դեղատոմսերի դուրս գրման ընթակարգի խախտումներ, մասնավորապես՝ խոսքը վերաբերում է դեղատոմսերը ոչ էլեկտրոնային կարգով դուրս գրելուն: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է բարձրացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ավագ բուժաշխատողների իրազեկվածության մակարդակը դեղատոմսերի լրացման, դուրսգրման, բաց թողնման վերաբերյալ: Դեղատոմսով բացթողնվող դեղերի գործընթացի իրազեկվածության աշխատանքներ են պահանջվում նաև դեղագետների համար:

4. Հանրային առողջապահության ոլորտում առկա են խնդիրներ խմելու ջրամատակարարման համակարգերի շահագործման գործընթացում, որոնք մասնավորապես պայմանավորված են համակարգերը շահագործողների բացակայությամբ, ինչը պահանջում է շարունակական վերահսկողության գործընթաց և ուղղորդումներ:

5. 2024 թվականին ուժը կորցրած է ճանաչվել «Հայաստանի Հանրապետությունում բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքը, և ընդունվել է «Հանրային առողջապահության մասին» օրենքը: Նշված հանգամանքով պայմանավորված՝ լիազոր մարմնի կողմից շարունակվում է սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հանրային առողջապահական նորմատիվներով փոխարինելու գործընթացը: Հանրային առողջապահական նորմատիվների հաստատմամբ փոփոխման ենթակա են լինելու սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտի բոլոր ստուգաթերթերը: Նշված ֆոնին համահունչ՝ ոլորտում դեռևս արձանագրվում է օրենսդրության պահանջների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ոչ բավարար մակարդակ, ինչը պայմանավորված է նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերի հաճախակի փոփոխություններով և նոր իրավական ակտերի ընդունմամբ:

Դրանով նաև անհրաժեշտություն է առաջանում լրամշակել ստուգումների ստուգաթերթերը: Նշված խնդրն առկա է նաև բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության ոլորտում:

6. Վերահսկողության գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է Տեսչական մարմնի տարածքային կենտրոնների ոլորտային ստորաբաժանումների աշխատողների համար նոր ընդունվող նորմատիվ իրավական ակտերի և ստուգաթերթերի լրացման վերաբերյալ դասընթացների կազմակերպում:

7. Վերահսկողության բոլոր ոլորտներում դեռևս արձանագրվում է օրենսդրության պահանջների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ոչ բավարար մակարդակ, ինչը պայմանավորված է նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերի հաճախակի փոփոխություններով և նոր իրավական ակտերի ընդունմամբ:

8. Հաշվի առնելով ԱԱՏՄ ճանաչելիության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը՝ կարևորվում է այցերի իրականացումը ՀՀ մարզեր և համայնքներ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ, տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների հետ հանդիպման նպատակով:

Հավելված N 1

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2025 թվականի « » N որոշման

Միջոցառումներ
ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Կատարող (համակատարող) ստորաբաժանում	Ժամկետ
1	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի թիվ 56-Ն հրամանով հաստատված «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վարակի կանխարգելմանը և հսկողությանը ներկայացվող պահանջներ» հանրային առողջապահական նորմատիվի հիման վրա նոր ստուգաթերթի մշակման վերաբերյալ առաջարկության ներկայացում Գրասենյակ:	Ստուգումների գործընթացի պատշաճ ապահովում	ՀՍՀՎՎ	1-ին կիսամյակ
2	«Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայությունների հաստատություններում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բնագավառի վերահսկողություն» 1.6 և «Վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողության նկատմամբ վերահսկողության» N 1.22 ստուգաթերթերում փոփոխություններ և լրամշակումներ կատարելու	Ստուգումների գործընթացի պատշաճ ապահովում	ՀՍՀՎՎ	1-ին կիսամյակ և ըստ անհրաժեշտության

ք. Երևան, Արարատյան 26
(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

	մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ			
3	Նոր ընդունվող նորմատիվ իրավական ակտերի և ստուգաթերթերի լրացման վերաբերյալ դասընթացների կազմակերպում ՏԿ ոլորտային ստորաբաժանումների աշխատողների համար	Վերահսկողության գործընթացի արդյունավետության բարձրացում	Ոլորտային վարչություններ	Յուրաքանչյուր եռամսյակ
4	«Շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման վերահսկողությոն Q 86.22, 86.90 (ՏԳՏԴ)»՝ N 3.14 ստուգաթերթի լրամշակում, ստուգաթերթերի լրամշակում ըստ անհրաժեշտության՝ իրավական ակտերի փոփոխությունների հետ կապված	Վերահսկողության ապահովում	ԲՕՍՎՎ	1-ին եռամսյակ
5	Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսուչների վերապատրաստումներ	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	ԱՕՎՎ	1-4-րդ եռամսյակ
6	Գործատուների կողմից նախկինում կնքված աշխատանքային պայմանագրերը աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգ չմուտքագրելու, ինչպես նաև փաստացի աշխատաժամանակի հաշվառում չիրականացնելու համար վարչական տույժեր նախատեսելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ	Աշխատանքային օրենսդրության կիրարկման և այդ նպատակով իրականացվող պետական վերահսկողության արդյունավետության բարձրացում,	ԱՕՎՎ ԻԱՓՎ	2-րդ եռամսյակ

ք. Երևան, Արարատյան 26
(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

Հավելված N 2

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2025 թվականի « » N որոշման

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների 2026 թվականի տարեկան ծրագիր

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Կատարող (համակատարող) ստորաբաժանում	Ժամկետ
1	ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներին առնչվող նոր ընդունված իրավական ակտերի հրապարակում կայքէջում	Նոր ընդունված իրավական ակտերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության բարձրացում, վերահսկողության ոլորտներում անվտանգության ապահովում	ԻԽՀՏԱԲ ոլորտային վարչություններ	Պաշտոնական հրապարակումից հետո 10-օրյա ժամկետում
2	Սեմինար «Էլեկտրոնային և թղթային դեղատոմսերի դուրս գրման և բաց թողնման կարգը բժիշկների և դեղագետների համար»	Բժիշկների և դեղագետների շրջանում դեղատոմսերի դուրս գրման և բաց թողնման վերաբերյալ իրազեկման բարձրացում	ԴՇՎՎ	2026թ Փետրվար-Մայիս
3	Նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքների՝ ստացված դիմում-բողոքների, հարցումների, զանգերի մասին ամփոփ տվյալների հրապարակում	Հաշվետվությունների, նյութերի պատրաստման և հրապարակման միջոցով հրապարակայնության ապահովում	ԻԽՀՏԱԲ	1-ին եռամսյակ

ք. Երևան, Արարատյան 26
(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

4	«Թեժ գիծ» ծառայությամբ ստացված զանգերի քանակի, բովանդակության պարբերաբար ամփոփում, վերլուծություն և լուսաբանում	Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովում	ԻԽՀՏԱԲ	Յուրաքանչյուր եռամսյակ
5	ԱԱՏՄ գործունեության, կատարվող աշխատանքների մասին իրազեկում	Իրազեկման նյութերի և ՁԼՄ-ների հոդվածների պատրաստման, ԱԱՏՄ կայքում և ֆեյսբուքյան հարթակով տարածելու արդյունքում իրազեկվածության բարձրացում	ԻԽՀՏԱԲ	Ըստ անհրաժեշտության
6	Ոլորտային նշանակալի և տոնական օրերի վերաբերյալ հանրային իրազեկում	ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների շրջանում գործընկերային միջավայրի ապահովում	ԻԽՀՏԱԲ ոլորտային վարչություններ	Ըստ օրացուցային օրերի
7	Իրազեկման սեմինարների անցկացում տնտեսավարող սուբյեկտների համար վերջիններիս կողմից հաճախ թույլտրվող խախատումների և նոր ընդունված իրավական ակտերի վերաբերյալ	Տնտեսավարող սուբյիեկտների իրազեկվածության բարձրացում, հաճախ թույլտրվող խախտումների քանակի նվազում	Բոլոր ստորաբաժանումներ	1-4-րդ եռամսյակ
8	Այցելություն ՀՀ մարզեր և համայնքներ	ԱԱՏՄ ճանաչելիության բարձրացում	ԱԱՏՄ	Յուրաքանչյուր ամիս, ըստ անհրաժեշտության

ք. Երևան, Արարատյան 26
(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am